ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1146-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

08.05.2026թ. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարկվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1146-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը[1] (այսուհետ նաև՝ Նախագիծ), որով սահմանվում է հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման հանրային քննարկման կազմակերպման և անցկացման կարգը:

Մասնավորապես, Նախագիծը սահմանում է հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման նախագծերի հանրային քննարկման կարգ՝ երկու եղանակի պարտադիր համակցությամբ. 1. նախագիծը տեղադրվում է հանրային քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական կայքում և e-draft.am հարթակում, ինչպես նաև ուղարկվում է շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի, 2. պարտադիր իրականացվում են նաև հանրային լսումներ, որոնց ներգրավվում են նաև ձեռքբերողը, օտարվող գույքի սեփականատերերը, փաստացի տիրապետողները և գույքային իրավունքներ ունեցողները:

Նախագծով սահմանվում է նաև հանրային լսումների մասին անձանց տեղեկացնելու վերաբերյալ կարգավորումներ, որոնք ընդգրկում են հայտարարությունը ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, լիազոր մարմնի և օտարվող գույքի գտնվելու վայրի տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերում հրապարակելու, ինչպես նաև համապատասխան մարզպետարանի կամ տեղական ինքնակառավարման մարմինների և վարչական շրջանի կամ բնակավայրի վարչական

[1] https://www.e-draft.am/projects/10148/justification

ղեկավարի նստավայրի հայտարարությունների ցուցատախտակի վրա փակցնելու պահանջ։

Կարևորելով հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման գործընթացի ամենավաղ փուլերում շահագրգիռ հանրության իմաստալից ներգրավման անհրաժեշտությունը՝ գտնում ենք, որ նախագիծը ենթակա է լրամշակման հետևյալ սկզբունքների հաշվառմամբ.

«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է հնարավոր ձեռքբերողի կողմից հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունն օտարելու վերաբերյալ դիմում ներկայացնելու կարգը։ Այսպես, եթե ձեռքբերողը պետությունն է, ապա հօգուտ պետության սեփականությունն օտարելու կամ օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրության դիմում կառավարությանը կարող են ներկայացնել պետական կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, շահույթ չհետապնդող կազմակերպությունները և համայնքները։ Եթե ձեռքբերողը պետությունը չէ, ապա սեփականությունն օտարելու կամ օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրության դիմում կառավարությանը ձեռքբերողը կարող է ներկայացնել համապատասխան ոլորտի պետական կառավարման մարմնի միջոցով։ Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունն օտարելու վերաբերյալ դիմումում, ի թիվս այլ տվյալների, նշվում է՝ հանրության գերակա շահը, որի համար պետք է օտարվի սեփականությունը, հանրության գերակա շահի հիմնավորումը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման, օտարման ընթացակարգի ապահովման, հանրության գերակա շահերի համար նախատեսված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրների կամ երաշխիքների վերաբերյալ տեղեկություններ, կարող են ներկայացվել այլ անհրաժեշտ նյութեր և փաստաթղթեր։

Այսինքն, այս փուլում դիմումում ներկայացված տվյալների և հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համապատասխան պետական մարմինը և կառավարությունը, ըստ էության, գնահատում են հանրության գերակա շահի առկայության կամ բացակայության հարցը, դրա հիմնավորվածությունը, օտարվող գույքի փոխհատուցման և նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և երաշխիքների առկայությունը և գործընթացի իրականացման համար անհրաժեշտ այլ նախապայմանները։

- Գտնում ենք, որ առաջին հանրային լսումը պետք է իրականացվի հենց այս փուլում, երբ քննարկման առարկա է դառնում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունն օտարելու վերաբերյալ դիմումը՝ թե հանրային գերակա շահի առկայությունը և դրա իրագործվելիությունը գնահատելու շրջանակներում շահագրգիռ հանրության կարծիքը բացահայտելու և իմաստալից մասնակցությունն ապահովելու նպատակով:

  Այս մինչնախագծային փուլում շահագրռիռ հանրության ներգրավումը ունի հստակ նպատակ՝ վերհանելու համապատասխան կառավարության որոշման ընդունման հասարակական անհրաժեշտությունը, իրականացնելու հանրային կարիքների, պահանջմունքների, շահագրգիռ /շահակիր/ հանրության կարծիքների, դիրքորոշումների, ակնկալիքների և հնարավոր լուծումների ու այլընտրանքային տարբերակների ուսումնասիրություն ու վերլուծություն, ինչն էլ իր հերթին կանխորոշիչ նշանակություն է ունենալու Կառավարության որոշման նախագծի մշակման և ընդունման, այլընտրանքային լուծումների որոնման կամ ձեռք բերողի ընտրության համար: Այսպիսով, հանրային մասնակցությունը պետք է ապահովվի առաջին հերթին որոշման ձևավորման նախնական փուլում, քանի որ հենց այդ փուլում են գնահատվում հանրության գերակա շահի առկայության, համաչափության, անհրաժեշտության և այլընտրանքային լուծումների հնարավորության հարցերը: Հակառակ դեպքում հանրային քննարկումը կարող է վերածվել արդեն իսկ մշակված մոտեցումների և լուծումների հետադարձ լեգիտիմացման գործիքի: Բացի այդ գտնում ենք, որ հանրային լսումներին պետք է ներգրավվեն ոչ միայն համապատասխան օտարման գոտում գտնվող գույքերի սեփականատերերը կամ գույքային իրավունքներ ունեցողները, այլև հստակ սահմանվի նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և փորձագիտական շրջանակներին ներգրավելու պահանջ, քանի որ հանրության գերակա շահի առկայության գնահատման հարցը բացի օտարման գոտում գտնվող գույքերի սեփականատերերից առնչվում է նաև առավել լայն հանրության իրավունքներին և շահերին, իսկ այլընտրանքային լուծումների կամ օտարման նպատակի իրագործվելիության հարցերի գնահատումը պարտադիր կարգով պետք է իրականացվի նաև համապատասխան փորձագիտական շրջանակների ներգրավմամբ:

- Այս փուլում նպատակահարմար է նաև նախատեսել հանրային լսման ընթացքում հանրության գերակա շահի իրագործման այլընտրանքային տարբերակների ներկայացման և քննարկման պարտականություն, ներառյալ՝ նվազ միջամտող լուծումների և սեփականության օտարում չպահանջող տարբերակների ներկայացումը, ինչպես նաև ձեռք բերողի բարեվարքության, օտարման նպատակի իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրների և երաշխիքների վերաբերյալ մանրամասն հիմնավորումների և փաստաթղթերի ներկայացման և քննարկման պարտականություն:

- Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանող կառավարության որոշմամբ նախատեսվում է, որ քննարկումների քարտուղարը պետք է կազմի քննարկումների վերաբերյալ գրավոր արձանագրություն, որն ստորագրվում է վերջինիս կողմից: Արձանագրությունում պետք է ամրագրված լինեն քննարկումներն իրականացնող մարմնի անվանումը, քննարկումների ամսաթիվը, թեման, քննարկումների մասնակիցների առաջարկությունները: Մասնակիցները կարող են առաջարկությունները ներկայացնել նաև գրավոր: Գրավոր ներկայացված առաջարկներն ու դիտողությունները ներառվում են ամփոփաթերթում, որոնք համապատասխան հիմնավորմամբ ընդունվում կամ չեն ընդունվում: Ամփոփաթերթը, արձանագրությունը և լրամշակված նախագիծը տեղադրվում են հանրային քննարկումներ կազմակերպող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև միասնական կայքում:

  Գտնում ենք, որ սույն դեպքում լիազոր մարմնի համար հստակ պարտավորություն պետք է սահմանվի՝ քննարկելու շահագրգիռ անձանց ինչպես գրավոր, այնպես էլ հանրային լսումների ընթացքում բանավոր ներկայացված առաջարկությունները և դիտողությունները, որոնք նույն տրամաբանությամբ պարտադիր կարգով պետք է արձանագրվեն ամփոփաթերթում, և որոնց վերաբերյալ պետք է ներկայացվի հստակ հիմնավորում՝ չընդունման կամ ընդունման պարագայում: Հակառակ դեպքում հանրային լսումները կրելու են խիստ ձևական բնույթ և որևէ բովանդակային արդյունքի չեն հանգեցնելու:

- Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հանրության գերակա շահ ճանաչելու մասին կառավարության որոշման ընդունման գործընթացում հանրային իմաստալից ներգրավման առանցքային կարևորությունը, գտնում ենք, որ

հանրային լսումները պետք է անցկացվեն. ա) առաջին հերթին հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունն օտարելու վերաբերյալ դիմումը քննարկելու մինչնախագծային փուլում, բ) իրավական ակտի նախագծի մշակման և հանրային քննարկման ներկայացման փուլում, գ) իրավական ակտի նախագծի լրամշակումից հետո: Բոլոր փուլերում անհրաժեշտ է նախատեսել թե առաջարկների ներկայացման եւ թե դրանց արձագանքելու ողջամիտ ժամկետներ: Այս առաջարկների իրացումը մասամբ պահանջելու է նաև անհրաժեշտ իրավակարգավորումների նախատեսում "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի շրջանակներում:

- Հանրային լսումների մասին անձանց տեղեկացնելու վերաբերյալ եղանակների շրջանակներում առաջարկում ենք նախատեսել նաև օտարվող գույքերի/շենքերի վրա համապատասխան ցուցատախտակների տեղադրման և համապատասխան հայտարարությունների փակցման եղանակի կիրառումը:

- Հանրային քննարկումների արդյունավետ իրականացումը ենթադրում է, որ շահագրգիռ անձինք նախապես հնարավորություն ունենան ծանոթանալու ոչ միայն լսման անցկացման վայրի և ժամկետների, այլ նաև քննարկվող հարցին առնչվող նյութերի, նախագծի բովանդակությանը, հիմնավորումներին, կից փաստաթղթերին և հնարավոր ազդեցությունների վերաբերյալ նյութերին:

  Առաջարկում ենք նախատեսել, որ հանրային լսումների մասին հայտարարության հետ միաժամանակ պարտադիր հրապարակվեն նաև համապատասխան հարցին առնչվող նյութերը, օտարման վերաբերյալ դիմումը, այնուհետեւ՝ որոշման նախագիծը, դրա հիմնավորումները, ինչպես նաև քննարկման համար էական նշանակություն ունեցող կից նյութերն ու փաստաթղթերը:

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն» ՀԿ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ